

ԳԵՐՊ. ՓՐ. ԱՂԱՃԱՆԵԱՆ

ՏԻՏՂՈՍԱԻՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՈՄԱՆԱՅ

Յուլիսի 12-ին ցանկալի լուր մը կ'աւետէր Գերպ. Փր. Աղաճանեանի եպիսկոպոս ընտրուելը: Իր Թանկագին ձերբերուն, առաքինազարդ և շնորհալի կենցաղին, եկեղեցական գիտութեանց խոր հմտութեան համար արժանի պսակ մ'էր այն՝ Ս. Աթոռին կողմէ, և այդ պիտի ըլլայ անշուշտ ի պայծառութիւն Հայ-Վաթոյիէ Նուիրապետութեան, քանի որ արդէն ընտրութեան առաջին օրէն իսկ նշանակուած է Նա իբրեւ Առաք. այցելու Զմմառեան Միաբանութեան, որուն առաջիկայ ընտրութեանց առթիւ պիտի Նախագահէ Ժողովին՝ փոխան Գերերջանիկ Հոգեւոր Տէր Արքեպիսկոպոս Կաթողիկոսի:

Նորընտիր Գերպ. ծնած է Ախալցխա, 1895-ին. 1906-ին կը մտնէ Հռոմի Ուրբանեան վարժարանը, ուր տասնամեայ շրջանին՝ շնորհիւ իր ուսումնական բացառիկ կարողութեան կը ստանայ հետզհետէ իմաստասիրական, աստուածաբանական և իրաւագիտական բոլոր ճիւղերուն վարդապետական վկայականները միշտ առաջին մրցանակ չափելով:

1917-ին կը ձեռնադրուի քահանայ և ղեկավարուի կ'անցնի հայրենիք և երկու տարի Ժողովրդավարական պաշտօն կը վարէ ի Թիֆլիս, և ինչպէս երբեմն իր կղերանոցի մեծաւորներուն և աշակերտութեան՝ հոս ալ հայ Ժողովրդեան խորին համակրանքն և սէրը կը վայելէ:

1920-ին Հռոմ կանչուելով որպէս փոխ-տեսուչ Լեւոնեան վարժարանի՝ կը կարգուի միանգամայն համալսարանական ուսուցիչ նախ իմաստասիրական և ապա աստուածաբանական ճիւղին՝ զոր կը շարունակէ մինչեւ ցայսօր դասախօսել իր նախկին կղերանոցին մէջ:

Երբ 1932-ին Գերպ. Սարգիս Վրդ. Տէր Աբրահամեան - նախկին դաստիարակ և հոգեւոր ծնող նոր ընտրեալին - կը կարգուի հայ կղերին ձեռնադրիչ եպիսկոպոս ի Հռոմ, Լեւոնեան վարժարանին տեսչութիւնը կը թողու Գերպ. Փր. Աղաճանեանի:

Եւ ահա, երեք տարի վերջ, դարձեալ նոյն ինքն Գերպ. Տէր Աբրահամեան է որ եպիսկոպոս կը ձեռնադրէ նորընտիրը Յուլիսի 21-ին Հռոմի մէջ, յամբաւ ուրախութիւն իրեն և բոլոր այն բարձրաստիճան եկեղեցականներուն և հայ ու օտար շրջանակին՝ որոնց քով շատ ծանօթ և շատ ալ սիրուած է Գերպ. Աղաճանեան:

Մեր լիասիրտ և անկեղծ շնորհաւորութիւնները և համակրանքը Գերպ. Աղաճանեանի, որ իր բարձր և Թանկագին կարողութիւնները ի սպաս կը դնէ հայ Ժողովրդեան, և Ս. Քահանայապետին յատուկ և ուղղակի յանձնարարութեամբ շարունակելով դեռ վարել Լեւոնեան Հայ կղերանոցին Տեսչութեան փափուկ և կարեւոր պաշտօնը՝ պիտի պատրաստէ առաքելի և ազգանուէր առաքեալներ մեր կարօտեալ Ժողովրդեան:

ԽՍՏԱԳՐՈՒԹԻՒՆ

«ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՌՈԳԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԵՐԵՆԻ»

ՎԵՐՋԻՆ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆՍ ՄԱՍԻՆ

Ա. — Կը նստիս երկու տարի սեղանիդ առջեւ, կը մխրճիս հայ լեզուի ամենէն կնճռոտ ու կարեւոր խնդրոց մէջ, զոր արդէն տարիներով որոճացեր ես. կը քննես հեղինակաւոր գրիչներն անոնց մասին, որ հարցմանցդ գոհացուցիչ պատասխան չեն տար. զի պիմացդ ունիս նոր փաստերու տարբեր մը, որ հակառակ եզրակացութեանց կը տանին զքեզ: Չես բաւականանար դու ինքզիք քու սեպհական դատողութեամբ. կը դիմես աշխարհէ աշխարհ. տեսութիւնդ կ'ենթարկես մասնագիտաց դատաստանին, որոնք նոր գտնելով հանդերձ զանոնք, ի տես փաստերուդ իրաւունք և ապահովութիւն կու տան քեզ: Այդ խնդրոց հետ կը կարդաս ու կը քաղես հին հայերէնի ամէն ինչէն, և մեր լեզուի ուղղագրութեան յօրինուածին կարեւոր գաղափարները դուրս կը բերես: Եւ հուսկ ի հրապարակ կը հանես գործդ՝ իբր արդիւնք երկարատեւ ու խղճամիտ պատրաստութեան մը:

Եւ ահա օր մ'աշխատութիւնդ կ'անցնի ձեռքի մը մէջ, որ առաջին անգամ հօդ կը հանդիպի քու շօշափած խնդրոց, հօդ կը տեղեկանայ անոնց, և ատոր մէջ ալ փակուած կը մնայ. և յօնքերը պուտած՝ «քու փաստերդ իսկ կը զինէ» քու դէմ, յայտարարելով՝ թէ «այդ փաստերը միայն պիտի գործածէ այս տեղ», — բնականապէս, երբ այդչափ միայն տուած ես իրեն. զի չունեցածք չի գործածուիր. — և «տեսութեանդ (և զրբիդ ալ) ամբողջ կառուսուածքին անկումը կամ կանգնումը» կը ցուածքին անկումը կամ կանգնումը» կը դնէ «հակառակական» հարցման մ'ու պատասխանի մը մէջ:

Սպառնալեաց վախէն աւելի մեծ կը լինի հիացումդ այդ անզուգական քաջութեան վրայ, որ զուտ հայկական է, և եւրոպական բանասէր աշխարհի մէջ դեռ անյայտ: Եւ մինչ համակերպութեամբ մը սպասես

դատաւանիդ լսելու, կը տեսնես յանկարծ ախոյեանիդ ծանուցումը՝ թէ հայ տառերու դասակարգաց կազմախօսական նկարագիրը, զոր կատարել ես՝ արեւմտեան մասնագիտաց հետեւած և իրականութեան ու քու իսկ զգալութեան համապատասխանող միակ դրութեամբ, «սխալ և անորոշ է» և անունդ հոլովուել է Հացունիի, և զիրքի, զիծի և այլն: Կը սթափիս հիացմանէդ, տեսնելով որ յասպարէզ կոչուած ես վիճելու հնչարանական փափուկ խնդրոց մասին՝ հայերէնի համար կորսուած արեւմտահայ անհամար ականջներէն միոյն հետ: Եւ երբ կը լսես իւրմէ՝ «կը հնչենք, պէտք է հնչենք», յուսահատութիւնը կը պատէ զքեզ:

Այս խորհրդածութիւնըս ինձ թելադրողն եղաւ Տիրան վրդ. Ն. Սիւնի մէջ (1935, 220) իւր յօդուածով՝ «Հայերէն նշանագրերու ձայնական արժէքի մասին», ընդդէմ վերոյիշեալ աշխատութեանս: Նըպատակ չունիմ հօս համոզելու զինքը տեսութեանցս ուղղութեան մասին, եթէ ամբողջ հատորս անբաւական եղաւ առ այդ, ներկայ պատասխանս բոլորովին անօգուտ է: Այլ պիտի խօսիմ միայն ընթերցողաց, որպէս զի ցուցնեմ՝ թէ ունինք զարգացածներ, որ յաճախ հրապարակ կ'իջնեն թմրելով ու փողով՝ բան մը չըսելու համար:

Յիշեալ աշխատութեանս մէջ կարեւորագոյն ձեռնարկներէս մին եղաւ հաստատել՝ թէ մեր նշանագրաց պ, կ, տ, ծ, ձ ներքոն ու բ, գ, դ, ձ, չ միջակաց նախնական կամ մեարդեան հնչումն էր արարտեանը կամ տարօնականը, ոչ կովկասեանը՝ ծագած Տփղիսէն ու վրացերէնի ազդեցութեամբ: Եւ Իիոն. Թրակացւոյն ու Պրիսկիանոսի նշարք (π ρ, κ ε, τ ι) և միջակ (β β, γ γ, δ δ) սահմաններն համեմատելով՝ մեր այդ համազօր տառից ձայնական կազմախօսութեան հետ, հետեցուցի՝ թէ լատիններէն p, c, t և b, g, d արդի հնչման մէջ փոխանակած են իրարու հետ իրենց

հին ձայները, որոց մնացորդները դեռ կան Եւրոպայի ինչ ինչ գաւառաց մէջ: Իսկ յուսականք աղաւաղած են մեծագոյն չափով:

Իմ այս տեսութիւնս «յանիրաւի» կը գտնէ վարդապետը, և թէ պատմական նորոգումը — միջակ — քառ սահմանին տուեր եմ «ինձ յատուկ իմաստներ», աստիճանաց այդ տարբերութիւնը դնելով ձայնակից տառերուն նուազ կամ աւելի խիստ արտաբերութեան մէջ: Ինք կը մերժէ այդ ամէնը, և նկատողութեան կ'առնու և իւր չունեցած ականջի դատաստանին կը յանձնէ մեր բաղաձայնից զանազան գուգորդութիւնը, անոցմէ հանելով ինձ հակառակ հետեւանքներ: Տարօրինակ բան պիտի լինէր՝ Ե զարու հնչական ներութիւնը որոնել վարդապետին հետ՝ Հացունիի և գիրի հոլովող բերանի մը մէջ: Հետեւաբար և աւելորդ է այս մասին վիճել հետը: Այլ պիտի քաշեմ զինքն հասարակաց ծանօթ օրինաց առջեւ, ուր միտքն աւելի կը խօսի քան ականջը:

Սխալ է ուրեմն՝ ըստ իրեն՝ իմ տեսութիւնս՝ թէ տառից երբեակ աստիճաններն արդիւնք են հնչական գործարանաց աւելի կամ պակաս պնդելուն: Եւ ասոր դէմ կը ստեղծէ նոր և իրեն միայն յայտնի վարդապետութիւն մը. որպէս թէ «արտաբերման ատեն մէկ գիրէն միւսին անցնելու դիւրութեան տեսակէտէն մօտիկութեան կարգով՝ նախ միջակն է, յետոյ նորոգը, յետոյ քաշը»: Փորձեցի հնչել՝ զոր օրինակ՝ գ, կ, ք, ապա կ, գ, ք, յետոյ ք, կ, գ, և ոչ մէկ կարգի մէջ դիւրութեան կամ դժուարութեան տարբերութիւն չտեսայ: Ախր ինչիս յատուկ զաղանիք մը կը թուի այդ, որոյ բնախօսական պատճառն ալ վ'անցնի մատնանշել: «Ասիկա, կ'ըսէ, անշուշտ այս (միջակ) գիրին բերնին մէջ արտաբերման տեղափոխ կամ ձեւական (ոչ սաստկական) կարգն է. ըստ այսմ ք, գ, դ (միջակները) բերնին մէջ բաղդատաբար իրենց ընկերներէն աւելի դէպի ետեւ կը պայթին. պ, կ, տ (նրբերը) կը պայթին բաղդատաբար միջակներէն աւելի դէպի բերնին բացուածքը տեղ մը. և փ, ք, ր

(թաւերը) կը պայթին շրթունքի և ատամներուն ամենէն մօտ տեղը»:

Եթէ վարդապետին բերանն ամբողջ մարդկութեան տրուածէն տարբեր յօրինուած մը չունի, ինչ որ անհաւատալի կը թուի, պէտք է հետեւցնել՝ թէ ականջին պէս բերանն ալ զուրկ է հակակշռէ: Մեր ականջը, մեր բերանին զգայնութիւնը, և համաշխարհի բոլոր հնչաբանք ու քերականք կը բաժնեն զերբ կ, գ, ք ըմայնոց, տ, դ, ր ատամնայնոց, պ, ք, փ շրթնայնոց եւն, զի իւրաքանչիւր խմբակի ձայները կը կազմուին բերանին մի և նոյն կիտին վրայ, սաստկութեան տարբերութեամբ միայն. ասոր համար ալ բոլորը նոյն տեղոյն անուամբ կը կոչուին. քմայիք, տտամնայիք եւն: Այս առաջին անգամ կը լսենք՝ որ — առնելով ամենէն զգալի օրինակը — շրթնայիններէն ք կը ծնանի Տիւրան վարդապետի «բերանին մէջ դէպի ետեւ». պ՝ «դէպի բերնին բացուածքը տեղ մը». և փ՝ «շրթունքի և ատամներուն ամենէն մօտ տեղը»: Եւ այսպէս այդ չորսնայիններէն ոչ մին տեղ չունի բուն շրթնայնոց մէջ: Եթէ չի զգար իւր ականջը, չի զգար իւր բերանը, կը բաւէր՝ որ նայէր խօսակցի մը շրթներուն, և պիտի տեսնէր՝ որ յիշեալ երեք տառերն ալ կը կազմուին անոնց միջեւ իսկ, ոչ ներսը: Եւ այս հընչաբանական թոհոհին միջէն է որ վարդապետը կը ծանուցանէ՝ թէ «գրերու բնախօսական արտաբերութեանց սխալ և անորոշ նկարագրութեանց» կու տամ ես ինք զինքս: Հարկ չկայ որ ես խօսիմ. ինքն իսկ շատ պերճօրէն կը պատասխանէ իրեն:

Ահա այսպիսի քննադատից ձեռքը մատնուած է յաճախ հայ բանասիրին բազմաբիրտ աշխատութիւնը, որոյ ընդլայնած նիւթին տարրական սկզբանց իսկ դեռ անտեղեակ, զայն դատելու՝ դատապարտելու և անոր գոյութեան անգամ սպառնալու կ'ենեն, ինչ որ լքուցիչ է մեր քաղաքակրթութեան տեսակիտով: Եւ որոց չպիտի ուզէիր ոչ իսկ պատասխանել, եթէ չգտնուէր դիմացդ ընթերցողաց ամբողջ մը, որ անբաւական է ընտրելու իրաւունքը

մատենագիրն ու քննադատին միջեւ՝ առանց օգնութեանդ:

Անցնելով բուն խնդրոյն, մեր փոյթը չէ՝ թէ Տ. Վ. Ն. նուրբ — միջակ — թաւ կարգն իւր անհակակշիռ բերանով փոխէ միջակ — նուրբ — թաւ: Ուր կ'ուզէ՝ թող դնէ անոնց պայթումը, երբ միջակը միշտ միջակ կը պահէ: Կարեւորը ք, գ, դ միջակաց հնչական աստիճանն է, որ նաեւ ըստ քննադատիս «միջակ ձայն մ'ունին, և ոչ նուրբ. այսինքն հնչմամբ կը համապատասխանեն b, g, d իրենց «արդի ակադեմական հնչումով, որ ըստ Եւրոպացւոց առանց հին հնչումն ալ է», (ինչպէս իրենց ապահոված լինելու են Եւրոպացիք), նորրոգ են թէ միջակ. և մեր ք, գ, դ այդ ձայնեւն թէ միջակ. և մեր ք, գ, դ այդ ձայնեւն թէ միջակ կը մնան, ինչպէս ինք կը կարծէ: Այս կէտն է զոր պիտի պարզենք այժմ:

Բոլոր ազգերու և բոլոր դարերու մէջ նորք ու քառ բառերը ձայնի վրայ՝ նշանակել են սաստկութեան աստիճանը. նորքը՝ կակուղ, քաշը՝ խիստ, և միջակը՝ բնականապէս երկուքին միջեւ: Արդ՝ երբ Դիոն. Թրակացին, իւր հայ թարգմանիչն ու Պրիսկիանոս նորք կ'անուանեն π υ ρ, α λ ε, τ ω τ, և միջակ՝ β ρ β, γ ρ γ, δ η δ, բնականապէս վերջիններս աւելի խիստ կը հասկանային քան նախորդները: Հնոց այս իմացուածին ճշգրիտ թարգմանն էր մերս Ստ. Սիւնեցին Ը դարուն, որ աստիճանաւորութեան իրական սահմանը կու տայ, երբ ատամնայնոց համար կ'ըսէ՝ թէ «լեզուին պնդել զատամունս՝ լինի դ (միջակ), և քաշացեալ՝ առնէ տ (նուրբ)». և աւելի մանրամասն, որուն քննադատս ուշ չէ դարձուցեր, «մէկ և պէ ասելով՝ հանդարտիկ ի միմեանս իջանեն շրթունքն, և թոյլ և կակուղ հանեն զձայնն. իսկ քնն ասելով՝ բախին ելանէ ի շրթանցն, և յուժ գին բախմանէ նոցա՝ ձայնը նոցա ստուար և թանձր մեզ լսին»: Սիւնեցւոյն առաջին խօսքն իմ դէմ դարձուց Տ. Վ. տ ին կակուղ խօսքն իմ դէմ դարձուց Տ. Վ. տ ին կակուղ ձայնն համարելով տ, և դ ին ստուար՝ d: Սակայն մարդկութեան ականջն ու բե-

րանին զգայնութիւնը մեզ կ'ուսուցանեն երեք իրողութիւններ, ոչ լաւ ծանօթը նոյն վարդապետին: 1, Գրերը կը գոյանան՝ զանոնք արտաբերող գործարանին փակուելովն ու թորեքէն արտաբերուած շնչէն վերստին բացուելով: 2, Տառերը ձայնաբաններէն դասաւորուած են՝ երեք աստիճանաց մեղմագունէն խստագունին երթալու կարգով, և ճիշդ այս կարգն է նուրբ — միջակ — թաւ սահմանը: 3, Ձայններէն մեղմագոյնները, որ կը գոյանան գործարանին թեթեւագոյն պնդմամբ ու նուազագոյն շնչով, են՝ լատին գրոց արդի հնչմամբ՝ b, g, d. ապա կու գան p, c, t. և այս իմաստով է՝ որ առաջին խմբակը կը կոչուի douce, և երկրորդը forte, ինչպէս կը հաւաստեն իմ կոչած զանազան աղբիւրներն աշխատութեանս մէջ (100-2):

Ո՛չ, կ'ըսէ մեր երուսաղեմացի քննադատը. այլ անոնց «douceը պէտք էի թարգմանել միջակ, իսկ forteը քառ»: Բայց միջակն ու թաւ նորք մ'ալ կը պահանջեն. ո՛ր է ուրեմն լատինական նուրբը: Եւ եթէ վարդապետին ականջն առ ոչ ինչ պիտանացու է, իմա և բոլոր մասնագիտացը կը վկայեն՝ որ անոնց douceն ու forte առաւելապէս խառնական ու գաղիական հնչմանց մէջ հաւասար են մեր նրբին ու միջակին: Եւ վերջապէս՝ հնչաբանութեան մէջ քաշը կը տանի զմեզ φ φ ph, χ ρ ch, θ ρ th ձեւերուն. և վարդապետն ամէն ուզածը չէ կարող ըսել ու պահանջել բանասիրութեան մէջ:

Յամենայն դէպս եւրոպացւոց հետ ընդունելով նա douce (մեղմ) սահմանն արդի b, g, d գրերուն, և forteը (խիստ) p, c, t տառերուն վրայ, ստիպուած է նաեւ բնորոշել՝ որ յոյն, հայ ու լատին հին քերականք իրենց օրով նորք կամ մեղմ կոչելով q π υ ρ, α λ ε, τ ω τ, և միջակ՝ q β ρ β, γ ρ γ, δ η δ, կը հաստատեն՝ թէ p c t և b g d այժմու սովորութեան հակառակ կը կը հնչուէին: Տ. Վ. Ն. արդէն յայտարարեալ ալ կը վկայէ՝ թէ հին գրիչներդ «b, g, d միջակները p, c, t նուրբներէն աւելի յոյր» անուանելով, կ'ականարկեն,

«ձայնալարերու գործածութեամբ պայ-
թումի ուժգնութեան»։ Ստոյգ է. և որով-
հետեւ եւրոպացի ականջաց կշռով՝ պայթ-
ման ուժգնութիւնն այսօր աւելի է p, c,
tին քան b, g, dին մէջ, ուրեմն p, c, t
աւելի յոյր են այսօր քան b, g, d նախ-
կին միջակերպ. ուստի հին ձայները փո-
խանակուած են իրարմով։ Եւ եթէ Տիրան
վարդապետի ականջը զուրկ է հակակշռէ,
պէտք է որ ընդունի՝ իրեն հետ նա և իւր
ակադեմիականը ու եւրոպացիք՝ գէթ այս տե-
սական սահմանը, և համոզուի՝ թէ մեր
պ, կ, տ հին նրբերն ու բ, գ, դ հին միջակ-
ներն ալ տարօնական հնչման մէջ է՝ որ
կը պահեն տակաւին իրենց նախկին աս-
տիճանները. այս ինքն պ(b), կ(g), տ(d)
և բ(p), գ(c), դ(t). և ոչ տփղիսականին,
որ նրբերը միջակացուց ու միջակները
նրբացուց՝ ըստ եւրոպական արդի հնչման։

Տ. Վ. ներս կը մտնէ իմ բացած ու-
րիշ դռնէ մ'ալ, հօն ևս իմ գէնքերս կար-
ծեօք իմ դէմ և արդեամբ իւր դէմ դարձը-
նելու համար։ Ներկայ հնչարանութիւնը,
որ խորագոյնս թափանցեց նշանագրաց
կազմախօսութեան մէջ, անոնց վրայ նշը-
մարեց ուրիշ յատկութիւններ եւս, և նոյն-
քը (douce) կոչեց և հնչուն (sonore), մի-
ջակը (forte) և աղօտ (sourde), և քաշը
նաեւ հագագային (aspirée)։ Պրիսկիանոս
ալ միջակները կոչած էր «զուրկ հագա-
գէ» համեմատութեամբ ph, ch, th հա-
գագային թաւերուն, և ոչ անշուշտ p, c, t
նրբերուն, որոնք եթէ հագագ ունենային,
h չէին առնուր թանձրանալու համար։

Պայթուցիկ գրոց հնչականութիւնն ար-
դիւնք է խոչակին թրթռացման. ես պիտի
յաւելում և բերանի գոգին ընդլայնման.
երեւոյթ մը, որ կը կատարուի անոնց մեղ-
մագոյն հնչման ժամանակ միայն, և ատով
է որ ձայնն հնչուն կ'ելնէ։ Նոյն հնչունն
երբ սաստկանայ, խոչակին թրթռացումը
վը դադրի, բերանին գոգը կը նեղնայ, և
գիրը կ'աղօտանայ. և աւելի եւս խստա-
նալով՝ հագագային կը դառնայ։ Արդ ըստ
ձայնագիր մեքենային ու զգայուն ական-
ջաց՝ հնչական ևս այսօր b, g, d տառերը,

որոնք հետեւաբար կը գտնուին պնդման
ու շնչոյ նուազագոյն աստիճանին վրայ,
որով և են այժմեան նրբերը. և քան զա-
սոնք ստուար և աղօտ են p, c, t, զոր կը
կրկնէ և Տ. Վ. Ն.։ Արդ եթէ b, g, d հին
միջակներն այսօր նուրբ են, և p, c, t հին
նրբերը միջակ, անգամ մ'ալ կը ցուցուի՝ որ
լատին գրերը փոխեր են իրենց հին ձայ-
ները, և թէ անոնց ու մեր ալ նշանա-
գրաց հին սահմանները կը գտնուին տա-
րօնական առողջանութեան մէջ, ինչպէս
ցոյց տուաւ Ռուսլոտի ձայնաչափն ալ։

Այդ գործին և այդ նուրբ հաշիւներն
անձանթ էին հին քերականաց. և անոնք
շնչոյ և պնդման զգալի աստիճանով կը
չափէին գրերը, զոր ահա կու գայ հաս-
տատել նոր արուեստն ալ, արդարացնե-
լով մեր տարօնական կամ արարատեան
արտասանութիւնը, և վկայելով եւրոպա-
կանին ու տփղիսականին աղաւաղման։
Այսպէս Տ. Վ. Ն. ուր ալ դառնայ, ստի-
պուած նոյն եզրակացութեան կը հասնի։
Եւ դեռ կը կարծէ՝ թէ այդ աղաւաղման
վրայ կը պնդեմ «առանց ապացոյց մ'ու-
նենալու»։ Ապացոյցներս շատ են գործիս
մէջ. և միակ բանը՝ որ կը պակսի, այն է՝
որ չեմ կարող նոր և զգայուն ականջ մը
տալ իրեն, որ արժեցնէ փաստերս։

Տառերու կազմախօսութեան մասին իւր
միտքը բոլորովին թոհրոհի մատնուած,
ինձ հակառակ հաստատելու կ'ելնէ՝ թէ
ժ քան շ և զ քան ս եւս «ուժգին և պինդ
են», որովհետեւ «կ'արտարբերուին, կ'ը-
սէ, նշագ շնչով և առջի պրկումով»։ Եթէ
ականջը գոյութիւն չունենար, միտքը կը
բաւէր վկայելու համար՝ որ գրերը կազ-
մուելով հնչող գործարանին պրկմամբ և
շնչոյն զայն անջատելով, ինչպէս լեզուն
քմքն կամ շրթներն իրարմէ, առջի պրկ-
ման հարկաւոր է առջի շունչ, ոչ թէ
նշագ։ Եւ իրականին մէջ ոչ թէ ժ և զ,
այլ շ ու ս են այդ առաւելութիւնն ու-
նեցող գրերը։ Հօս ալ ուրեմն ձախողած
է վարդապետին ականջը, և ես չեմ մտնե-
ր այն համեմատութեանց մէջ՝ զոր կը հաս-
տատէ այդ սխալ հիման վրայ։

Ախոյենիս վերջին ապաւէնն է ս. Գրոց
թարգմանութիւնը, յորում Յոյնը ու Լա-
տինը երբայական անուանց տառերը թարգ-
մաներ են իրենց նշանագրաց արդի հնչ-
ուններով։ Պատասխանս պարզ է. Աս-
տուածաշնչի հելլենացումը դարերով կա-
նուի է բուն զթրակացին, և լատիններէնը
կապուած էր յունարենին հետ, որ անոր
փոխ տուաւ իւր տառերն ալ։ Արդ՝ Տ. Վ.
կրնայ ըսել՝ թէ ինչ խաւերէ անցեր են
յունական՝ հռոմէական ու երբայական ա-
ռողջանութիւնը նախ քան զթրակացին։
Ուրիշ հարցում մ'ալ իբր պատասխան.
Պարթեւը Պարսից հզօր և իշխեցող դրա-
ցիներն էին, և դարերով կենակից անոնց
հետ. արդ ինչո՞ւ Պարսիկներն անոնց
հետ. արդ ինչո՞ւ apatn a-
marzpanc marzban ըրին, apatn a-
bad, kapotc kabud, nikunc nigon,
Aturpatakan Adarbadgan և այլն։
Մեք կը խօսինք որոշ հեղինակաց ու շըր-
ջաններու մասին, որոց տեղեկութիւնը
չատ յստակ են, և որոց հետ չեն համե-
մատուիր անորոշները, որոց վրայ պատաս-
խանի կարօտ շատ հարցումներ կան։

Այսքան Տիրան վարդապետին։

Բ. — Կարծելու չէ՝ թէ ախոյենիս խոր-
հելու անսովոր եղանակն ընդհանուր լի-
նի Ս. Յակոբայ վանաց մէջ։ Կան հօն
նաեւ մտքեր՝ որոց չի պակսիր իրենց
խօսածին կամ գրածին գիտակցութիւնը։
Այսպէս անցեալ տարի Սիոնի մէջ (219)
երեւեցաւ Ն. Վ. Պ. երկար գրախօսակա-
նով մ'աշխատութեանս վրայ, ցոյց տա-
լով խոր թափանցում մ'ու լուրջ նկա-
տողութիւն մ'անոր բովանդակութեան,
որոյ համար առթէն կ'օգտուիմ յայտնե-
լու անկեղծ շնորհակալութիւնս։

Պատուական գրախօսը վերապահում մը
կ'ընէր միայն յ և զ տառից խնդրոյն մէջ
յայտնած մէկ տեսութեանս։ Նկատելով
որ Է դարուն օտարաց ին առ հասարակ
դ ով փոխադրուած է հայերենի մէջ, և թէ
մեր հին գրչագրերը գննելով, որչափ դէպ
ի վեր կ'ելնենք ժամանակաւ երթալով
կը նուազի յի գործածութիւնը և կը բազմա-
նայ զ ը, հետեւցուցի՝ որ ի սկզբան հայ

բերանին անձանթ էր յ, և անոր տեղ ղ
կը հնչէր։ Գրախօսս չընդունեցաւ այս հե-
տեւութիւնը, աւարկելով՝ որ «մեր լեզուին
ընտանեկից հնդկերոպական լեզուներն
ալ ունին այդ ձայնը»։ այս ինքն անոնց
ազդեցութիւնն իսկ կը պահանջէր յ ի նախ-
նականութիւնը մեր քով։

Կը պատասխանեմ նախ՝ որ լեզուի
մ'առանձնայատկութիւնը կը կայանայ
բուն իսկ դրացիներէն անջատման մը մէջ։
Գաղիոյ սրտին մէջ իսկ է՝ որ Ի գիրը ղ
կը հնչէ՝ հակառակ բոլոր ազգին ու Եւ-
րոպէի։ Երկրորդ՝ հնդկերոպական լի ազ-
դեցութիւնն յայտնապէս կը տեսնենք գրա-
ւոր շրջանին մէջ, ուր ղ հետ զհետէ տեղի
տուեր է յին։ Արդ՝ եթէ նոյն ազդեցու-
թիւնն ի սկզբանէ իսկ լինէր, ինչպէս
ուրեմն կրնար յետոյ հակառակը պատա-
հիլ, յը ղի փոխուիլ, ապա վերստին ղի
դառնալու համար, երբ հնդկերոպական
լեզուները կը շարունակէին ապրիլ մեր
շուրջ։ Նախկին կարծեցեալ ղին փոփո-
ւումն ի ղ պիտի կարենար պատահիլ՝ կամ
հայ առողջանութեան բնական միտմամբ առ
ղ, և այն ժամանակ այդ միտումը պէտք
էր բուն իսկ նախնական լինել, և կամ
հետագայ դատահնչիւն օտար և հզօր գաղ-
թականութեամբ մ'ի Հայաստան, որ նախ
մեր յ ն ի ղ շրջեց, և ապա ինքն ալ ըն-
կաւ մեզ հետ հնդկերոպական ղի ազդե-
ցութեան ներքեւ։ Սակայն այդպիսի գաղ-
թականութեան մը յիշատակը չէ թողած
պատմութիւնը. և զմեզ շրջապատող ծա-
նօթ հին լեզուներն ալ ղ չունէին՝ մերոյս
աղբիւր լինելու համար, ապաժաման արա-
բերենէն զատ։ Եւ եթէ անոնց դրացու-
թիւնը բաւական լինէր ստիպողական ընե-
լու յը մեր լեզուին մէջ, նոյնը ղն ալ
բացակայ պահելու էր մեր բերանէն։ Իսկ
եթէ սա կար յառաջագոյն և աւելի ըն-
դարձակ էր քան միւսը, կրնար նաեւ ժա-
մանակ մ'ամբողջովին գրաւել անոր տեղը,
երբ տակաւին սերտ կցորդութեան մէջ
չէինք մտած միւս լեզուաց հետ, մինչեւ
ապա անոնք աւանդեցին մեզ ղ ձայնը։

Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ